



**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**



6849-74r.

**Նորին Ամենապատուութիւն
Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրստեբանին
Պատրիարքին Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմ**

Աստուծոյ ողորմութեամբ, վերստին կանգնած Նոր Տա-
ւոյ սեմին, կ'ողջունենք լուսափայլ յիշատակը Փրկչին մեր Քրիս-
տոսի, եւ Անոր Իշման Տեղէն ի Հայաստան աշխարհ, Ամենայն
Հայոց Սուրբ Էջմիածնէն, կը բերենք օրհնութիւն եւ բիր բարի
մաղթանքներ Ձերոյ Ամենապատուութեան, Սուրբ Աթոռոյդ զին-
ւորեալ միաբանութեան ու համայն մեր հաւատացեալ զաւակնե-
րուն:

Սուրբ Ծննդեան երկնառափ շնորհները՝ սիրոյ եւ խաղա-
զութեան, թող իջնեն ու բաշխուին մեր օրերու խոսովայնոյ
աշխարհին եւ բոլոր մարդոց ու ժողովուրդներուն, ու նաեւ մեր
փոքր ածուին, մեր Սուրբ եկեղեցիին եւ ժողովուրդին, ի կատա-
րումն մեր բոլորի ազնւի եւ արդար իղձերուն:

Խոնարհ եւ յուսացեալ սրտերով դէպի երկինք սեւեռեմ
մեր հայեացքը եւ փազրութեամբ ընդունինք պատգամը Բեքդե-
ւեմի հրեշտակներուն՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր
խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Խաղաղութիւն ընդ Ձեզ ամենեւսին որ է՛ք ի Քրիստոս Յիսուս, ամէն:

ՎԱԶԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
11 Ռեկտեմբեր 1968